ՀՏԴ.159.9 Հոգեբանություն

ԼԻԴԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ինննա ՄԿՐՏՉՅԱՆ

Բանալի բառեր՝ *քաղաքական լիդեր, քաղաքական հարաբերություններ, սոցիալական խմբեր, հանրություն, քաղաքական մթնոլորտ, ինքնավստահություն, փոխհարաբերություններ*

Ключевые слова. *политический лидер, политические отношения, социальные группы, сообщество, политическая атмосфера, самоуверенность, взаимоотношения.*

Keywords. *political leader, political relations, social groups, community, the political atmosphere, self-confidence, relationship.*

И.Мкртчян
Проблема лидерства в социальной психологии

Политический лидер, выражая и выполняя некие интересы социальных групп, влияя на людей, является главным нормативом социального общества. Лидер может вынуждать массы строить или разрушать, привести страну к перестройке или застою. Наиболее важную роль лидер имеет в переходном периоде. В таком случае, резко возрастает степень личной ответственности лидера перед обществом.

I.Mkrtchyan
The Problem of Leadership in the Social Psychology

The political leader who expresses and realizes certain interests of social groups and influences on people, is the main standard of social society. The leader may force the masses to build or to destroy, to lead the country to the reconstruction or stagnation. The leader plays the most important role in a transition period. In this case the level of the leader's personal responsibility to the society sharply increases.

Քաղաքական լիդերը արտահայտելով և իրագործելով որոշակի սոցիալական խմբի հետաքրքրություններ, ներգործելով մարդկանց վրա, սոցիալական հանրության կարևորագույն կարգավորիչն է հանդիսանում: Լիդերը կարող է ստիպել զանգվածներին կառուցել կամ քանդել, երկիրը կարող է տանել վերափոխման կամ լճացման: Առավել մեծ է լիդերի դերը անցումային շրջանում:Այստեղ կտրուկ աճում է քաղաքական լիդերի անձնական պատասխանատվության աստիճանը հասարակության առջև:

Լիդերության հիմնախնդրի վերաբերյալ հոգեբանական գրականության մեջ առկա են տարաբնույթ մոտեցումներ: Լիդերության խնդիրը ժամանակակից սոցիալական և քաղաքական հոգեբանության կենտրոնական և խրթին հիմնահարցերից է:Դա պայմանավորված է նրանով, որ խնդրի վերլուծության ժամանակ նույնացվում և հավասարեցվում է որակապես երկու տարբեր տիպի լիդերություն՝ 1.լիդերություն՝ փոքր կոնտակտային խմբերում և 2. Լիդերություն՝ մեծ սոցիալական հանրություններում: Երկու դեպքում էլ հանգուցային խնդիրը լիդերության մեխանիզմներն են:

Լիդեր բառն անգլիական /leader/ ծագում ունի և նշանակում է առաջնորդ, պարագլուխ, այսինքն՝ այլոց ղեկավարող, հրաման արձակող:

Խորհրդային սոցիալական հոգեբանության մեջ լիդերությունը համատեղ գործունեության ընթացքում մեկ անձի ազդեցությունն է մյուսի վրա, որի հիմքում ընկած են անհատի անձնային որակները: Ըստ Պառիգինի՝ լիդերը իրագործում է միջանձնային հարաբերությունների կարգավորումը խմբում. լիդերությունը գոյանում է տարերայնորեն, սակայն ղեկավարի նշանակումը տարերային չէ[1]:

Լիդերությունը ի տարբերություն ղեկավարության ավելի անկայուն է, կախված է խմբի ընդհանուր տրամադրությունից: Ղեկավարին տրվում է պատժամիջոցների կիրառման

[1]Սեդրակյան Ս. Ա., Եղիգարյան Վ. Մ. <<Քաղաքական հոգեբանություն>>,Երևան, 2002թ., էջ 12

հնարավորություն /պատիժ, խրախուսում և այլն /, որի հնարավորությունը լիդերը չունի:Լիդերության և ղեկավարության խնդիրը 70-ական թվականներից խորհրդային սոցիալական հոգեբանության հիմնախնդիրներից է: Պառիգինը նշում էր նաև, որ լիդերության մեջ գերազանցում է բնականը. ազատը, ոչ պաշտոնականը, իսկ ղեկավարության մեջ՝ պաշտոնականը : Պարզ էր , որ սոցիալական հոգեբանության մեջ լիդերության դիտարկումը իբրև փոքր խմբին հատուկ երևույթ պայմանավորված էր տեսական ընդհանրացումներով, իսկ տեսական ընդհանրացումներով լիդերը պետության, կուսակցության առաջնորդ լինել չի կարող [1] :

Համաձայն կառավարման ոլորտների՝ անհրաժեշտ է տարբերակել լիդերի հետևյալ տեսակները՝ քաղաքական, տնտեսական, ռազմական, գիտական և այլն:Բազմաշերտ հարաբերությունների այս մեխանիզմում հատկապես որոշիչ տեղ ունի քաղաքական լիդերը:Ըստ այդմ էլ քաղաքական լիդեր համարում են բոլոր նրանց, ովքեր ցանկանալով տեղ գրավել իշխանական հարաբերություններում, առաջարկում և քննարկում են ծրագրեր, ընդունում որոշումներ և ուղիներ մշակում դրանց իրականացման համար: Իշխանությունը գաղափարի, կամքի և զգացմունքի հարաբերություն է, և ցանկալի է, որ քաղաքական լիդերը իր վարքաբանությամբ ներդաշնակի դրանց իրականացմանը[2]:

Քաղաքական լիդերությունն օբյեկտիվ և համընդհանուր /գլոբալ/ երևույթ է: Օբյեկտիվ է, որովհետև ցանկացած իշխանական հարաբերություն ունի կազմակերպման, նպատակին հասնելու ռացիոնալ ուղիների մատնանշում:Այդ գործառույթները կատարում են այն անձինք, որոնց ընտրում են և որոնք իրենց հեղինակությամբ, հավասարակշիռ վարքով կարող են նպաստել ժողովրդավարության զարգացմանը:

Համընդհանուր /գլոբալ/, որովհետև իշխանական հարաբերություններում լիդերի կարիք ունեն միջանձնային, խմբային, կազմակերպչական, ինչպես նաև կուսակցական, հասարակական, պետական միջազգային կառավարման համակարգերը [3]:

Քաղաքական լիդերության բնութագրիչներն են՝ իրավիճակի ճիշտ գնահատում, առաջադրված խնդիրների լուծման համար ուղիների որոնում, մարդանց հավաքագրում և այլն: Զարգացած ժողովրդավարական երկրների քաղաքական լիդերության փորձը վկայում է, որ այն բաղկացած է ինտելեկտուալ անհատներից և կառավարչական խմբերից: Ե'վ ինտելեկտուալ անձինք, և' կառավարչական խմբերը իշխանական հարաբերություններում տեղ ապահովելու համար մոդելավորում են իրենց քաղաքական վարքաբանությունը: Այն ենթադրում է արարիչ քաղաքական գործունեություն և ավերիչ քաղաքական անգործություն:

Հարկ է նշել, որ քաղաքական լիդերության հիմնահարցը միշտ էլ հուզել է մարդկությանը:<<Ով պետք է կառավարի և ինչպես պետք է կառավարի>> հարցը եղել է փիլիսոփաների, պետական և քաղաքական գործիչների ուսումնասիրության առարկան դեռևս հին չինական / Գուան Չժուն, Լաո Ցզի,Կոնֆուցիուս/ և հին հունական /Պլատոն, Արիստոտել/ մեծագույն մտածողների համար: Հետագայում այդ հարցի ուսումնասիրության մեջ իրենց մեծ ավանդն են ունեցել աշխարհահռչակ այնպիսի մտածողներ, ինչպիսիք են Մաքիավելին, Հոբսը, Լոկկը, Մոնտեսքյուն, Ջեֆերսոնը և այլ հայտնի մտածողներ:Ներկայումս այս հարցի կարևորությունը չի նվազել, այլ ընդհակառակը մեծացել է:Կարելի է առանձնացնել հիմնահարցի կարևորության հետևյալ հիմնական պատճառները.

Նախ՝ գիտատեխնիկական հեղափոխությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը էապես մեծացրել է տնտեսության, կյանքի տարբեր ոլորտների միջև փոխադարձ կախվածությունը, ինչպես նաև որոշումներ ընդունելու համար անհրաժեշտ տեղեկատվության ծավալները:Այդպիսի պայմաններում որոշումներ ընդունող առաջնորդները, վերնախավերը կամ այդպիսի որոշում ընդունելու համար լիազորված մարմիններն իրենց որոշումները

[1] Блондел Ж. << Политическое лидерство>>, Москва, 1992г.,стр. 47

[2] Մարգարյան Մ. Մ. <<Քաղաքական լիդերություն>>, Երևան, <<Պետական ծառայություն>>, 2001թ., էջ 3

[3] Մարգարյան Մ. Մ. << Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր>>, Երևան, <<Պետական ծառայություն>>, 2004 թ., էջ 9

պետք է կառուցեն իրավիճակի խոր վերլուծության վրա: Խոր գիտելիքներ և հմտություններ են պահանջվում նաև այդ որոշումները իրականացնելու համար :

Քաղաքական որոշում ընդունող անձը, քաղաքական կուսակցությունը, պետական մարմինը պետք է ոչ միայն տիրապետի այդ որոշմանն առնչվող քաղաքական տեղեկատվությանը, կարողանա վերլուծել այն, տեղեկատվությունը զանազանի ապատեղեկատվությունից, այլև հաշվի առնի ոչ քաղաքական /տնտեսական, սոցիալական և այլ/ գործոնների ազդեցությունը և այդ որոշման տնտեսական, սոցիալական և այլ հետևանքները :

Երկրորդ՝ 21-րդ դարի սկիզբը կարելի է բնութագրել որպես ողջ աշխարհում լիբերալ- դեմոկրատական գաղափարախոսության և տնտեսության մեջ ազատ շուկայական հարաբերությունների ժամանակաշրջան: Քաղաքական կառավարման այս համակարգում զանգվածներն իրենց քաղաքական առաջնորդներից ակնկալում են ժողովրդավարական նորմերի կիրառում, հարգանք իրենց իրավունքների և շահերի նկատմամբ և իրենց վրա ճնշումների և բռնությունների բացառում:

Եվ երրորդը աշխարհում ընթացող ինտեգրացիոն գործընթացներն են: Այսինքն ցանկացած քաղաքական որոշում, որն ընդունվում է քաղաքական առաջնորդների կողմից, անպայմանորեն իր ազդեցությունն է ունենում այդ երկրի և նրա հետ շատ թե քիչ սերտ հարաբերություններ ունեցող երկրների, և մանավանդ հարևանների հետ հարաբերությունների վրա:Այս հանգամանքը քաղաքական առաջնորդներից պահանջում է, որ նրանք ունենան վերազգային տեսունակություն / vison/ և ունակ լինեն հստակ պատկերացնելու իրենց տեղն ու դերը քաղաքական կառավարման գլոբալ մակարդակում[1]:

Քաղաքական լիդերությանն անդրադարձել է Նիկոլո Դը Բեռնարդո Մաքիավելին: Վերածննդի դարաշրջանի այս հայտնի փիլիսոփան իր <<Միապետը>> աշխատության մեջ նշուն էր, որ քաղաքական առաջնորդին պետք է բնորոշ լինի ինքնավստահությունը, համարձակությունը և խարդավանքը: << Ահա այն հատկանիշները, որոնցով լիդերը պետք է պետությունը ղեկավարի>>,- նշում է Մաքիավելին: Նա գտնում էր, որ հանուն պետության հզորացման, լիդերը կարող է խախտել բարոյական նորմերն ու կանոնները : Ըստ այդմ էլ ՝ լիդերը նա է, ով կարողանում է մի կողմից լինել առյուծ, մյուս կողմից աղվես: Այսինքն՝ լինել և' ուժեղ, և' խորամանկ: Մի կողմից ՝ բռնություն, մյուս կողմից ՝ խորամանկություն, իմաստությամ՝ ահա կառավարողի կերպարը: Մաքիավելին լիդեր է համարում նրանց, ովքեր կառավարում են իրականացնում՝ կարևորելով հետևյալը.

ա/ սեփականության, ընտանիքի և յուրաքանչյուր քաղաքացու պաշտպանություն ցանկացած ոտնձգություններից,

բ/ անհրաժեշտ է ուժեղ բանակ՝ պետությունը թշնամիներից պաշտպանելու համար,

գ/ կրթական համակարգի արժևորում հանուն պետական շահերի

դ/ քաղաքացիների ընդունակությունների ուսումնասիրում. Քանզի լավ պետությունն այն է, որտեղ մարդու որակը համապատասխանում է նրա ընդունակություններին:

Մաքիավելիի մշակած սկզբունքներից շատերը մինչև օրս էլ իշխում են լիդերության տենչող կառավարիչների մտքի և հոգու վրա [2]:

Լիդերության տեսության զարգացման վրա մեծ ազդեցություն է ունեցել սոցիալական հոգեբանության հիմնադիրներից Գ. Տարդի աշխատանքները:

Գ.Տարդը գտնում էր, որ իսկական լիդերը հազվագյուտ պատահականություն է և սոցիալական զարգացման մեծագույն արդյունք: Գ. Տարդը պնդում էր, որ զանգվածների մոտ հաջողության հասնելու համար լիդերը պետք է հարվածի նրանց ջղերին/

[1] Մարգարյան Մ. Մ. << Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր>>,Երևան, <<Պետական ծառայություն>>, 2004թ. ,էջ 12

[2] Մարգարյան Մ. Մ. <<Քաղաքական լիդերություն>>, Երևան, <<Պետական ծառայություն>> 2001թ., էջ 48

նյարդերին / : Քանզի առանց առաջնորդի հասարակությունը գլխատված մարմին է ՝ անկարող ինքնուրույն գործելու[1]:

Միշտ չէ, որ լիդերները ուժեղ անձինք են: Համաձայն հոգեվերլուծության հիմնադիր Զ. Ֆրոյդի տեսության՝ թույլը ավելի շատ է հակված և տենչում լիդերության, քան ուժեղը: Ուժեղը <<ես>> ունի, մինչդեռ թույլը ցանկանում է ինքնահաստատվել՝ հաճախ չունենալով ինքնություն, ձգտում է ունենալ իշխանություն և ըմբռշխնել այն՝ ստանձնելով առաջնորդի ստատուսը: Քաղաքականությունը մարդու ենթագիտակցական հակումների , առաջին հերթին սեքսուալ բավարարվածությանը /լիբիդո/ փոխարինելու ենթագիտակցական սուբլիմացիա է: Ճնշված լիբիդոն ձևափոխվում է իշխանություն ունենալու ցանկության, լիդեր դարձած մարդու ֆիզիոլոգիայից չի հանում նյարդայնությունը, արդյունքում մարդկությունը ունենում է պարանոիկ-նևրոտիկ լիդերների մի շքերթ՝ Ռոբեսպիեր, Նապոլեոն, Ստալին, Հիտլեր…

Սեքսուալ բնազդների սուբլիմացիան, համաձայն Ֆրոյդի, ընկած է մարդու սոցիո-մշակութային, քաղաքական և այլ տեսակների գործունեության հիմքում: Սեքսուալ բնազդը վերաճում է էրոսի / կյանքի բնազդ/, որի հետ համատեղ ի հայտ է գալիս թանատոսը /մահվան բնազդ/: Այս ամենը մարդը հասկանալով տենչում է լիդերության: Քաղաքական լիդերի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար Ֆրոյդը մշակեց հոգեկենսագրական մեթոդը:Այդ մեթոդի նպատակն էր բացահայտել քաղաքական լիդերի էությունը, նրա հոգեպաթոլոգիան որոշումների ընդունման ժամանակ:

Եվ հաշվի առնելով առկա ուսումնասիրությունները՝ բազում քաղաքագիտական կենտրոններ քաղաքական լիդերին կայացած են համարում հետևյալ պահանջները բավարարելուց հետո.

- եթե նա ունի հումորի զգացում, ինտելեկտ, կանխատեսելու շնորհք, հաճելի շարժուձև, շրջապատի հոգսերի նկատմամբ ուշադրություն, ինչպես նաև երկխոսություն վարելու կարողություն, ունակ է իր ներկայացրած ծրագրի իրականացման համար ուղիներ մատնանշել՝միաժամանակ պատասխանատվություն կրելով նրա արդյունքների համար:

Այսպիսով՝ քաղաքական լիդերությունը առաջնորդների և շրջապատողների /զանգվածների/ միջև փոխազդեցությունների արդյունքն է: Այդ փոխազդեցությունների արդյունքը կարող է նպաստել հասարակական առաջընթացին կամ չեզոք լինել այդ առաջընթացի նկատմամբ:

Գրականություն

1. Մարգարյան Մ. Մ. << Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր>>, Երևան, <<Պետական ծառայություն>>, 2004թ.
2. Մարգարյան Մ. Մ. <<Քաղաքական լիդերություն>>, Երևան, <<Պետական ծառայություն>>, 2001թ.
3. Սեդրակյան Ս. Ա., Եդիգարյան Վ. Մ. << Քաղաքական հոգեբանություն>>, Երևան, 2002թ.
4. Блондел Ж. <<Политическое лидерство >>, Москв, 1992г.
5. Тард Г. << Психология толпы >>, 1998 г.
6. internet / www. google. ru./

Տեղեկություններ հեղինակի մասին.

Իննա Մկրտչյան *- Մանկավարժության և հոգեբանության ամբիոն, ԱրՊՀ*

E:mail: inna.mkrtchyan.1980@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, հ.գ.թ., պրոֆեսսոր, Ա.Մխիթարյանը:

[1]Тард Г. << Психология толпы >>, 1998г., стр.16